

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔՆՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ Ն. ԱՂԲԱԼԵԱՆԻ

Ի ՄԱՍԻՆ Ս. ԿԱՆԱՅԵԱՆԻ

«ՓԱՋԱՆՅ ՏՈՒՆ. (ԱՐՇԱԿՈՒՆԻԲ). ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԷՊ» Ի

Տեսանք որ հայեւորը հեղեղ գուշակած էր Շիրին շահի համար, ինչպէս սարիք եկող ձախը՝ խորով թագաւորի համար: Ո՛րն է այն հեղեղը — Արշակ Բ. եւ Վասակ Մամիկոնեան Շապուհին յաղթում են Ասորդատականում: «Պատերազմն է ուրեմն, գրում է հեղինակը, որ երկինքն ամպեց եւ կարկուտ եկաւ: Սկսում է անա, ասինք, եւ հեղեղը» (359): — Մեհրուբան եւ Շապուհ աւարում են հայոց վերնագաւառները, փախտոս գրում է. «Շապուհ պարսիկ թագաւորը անթու զօրով առաջատակեց հեղեղիով տարածւում էր բազմութեամբ ինչպէս բուգարսի ցրէն: Ընդգծելով բառերը հեղինակը գրում է. «Անա եւ հեղեղը»: Տեսանք, որ Շիրին շահ չբամու պէս մի բանից» քշուած՝ զօրքս եկաւ մի օտար աշխարհ եւ դարձաւ մի լայա մարդուն ծառայ, որ իր աղջիկը նրան կին տուաւ: Գիտենք նաեւ, որ Արշակ Բ. ստիպուած եղաւ գնալ Պարսկաստան, ուր Շապուհն նրան զրաւ Անուշ ընդդր: Յիշելով այս ղէպըը հեղինակը գրում է. «այժմ հանդիմանի կը լինի եւ օսար երկիրը, որտեղ նա (Շիրին շահը) ռաշպար՝ հողագործ, ծառայ եղաւ: Իսկ լայա մարդուն աղջիկը, որ Շիրին շահի կինն եղաւ ծառայութեան փամանակ, — Շապուհն ուղղում էր իր դուստր նրան կնութեան տալը գրում է հեղինակը. (361): Այս մեկնութիւնը յարմարցնելու համար հեղինակը կարծում է, որ զըրջը խօսում է ոչ թէ Արշակ Բ.ի վերջին երթի մասին, այլ նախալերջին: Բայց այդ ժամանակ պատերազմի հեղեղը չէր, որ շրջ Արշակին Պարսկաստան, իսկ Շապուհն իր գուտարը այդ ժամանակ ռուղում էր» նրան կնութեան տալ:

Հեղինակը այնքան վստահ է թէ գտած է Արշակունեաց վէպը ժողովուրդի յիշողութեան մէջ, որ փորձում է վէպով պատմութիւն ճշդել կամ լրացնել: Հեթ թաւորներ, ասում է նա, փեսայ է տէրտէրի, այդ կարող է լինել Լուսաւորիւր կամ որդին Վրթանէսը: Բայց փաւտտից յայտնի է, որ Վրթանէսն սպանելու փորձ են անում անարեկելով մեծին հայոց տիկնոջ: Ուրեմն Վրթանէսի քայքայ կամ աղջիկը, որ զըրջի տակով եւ հեղինակի ենթադրութեամբ խորովի կինն է եղած, պէտք է դաւած լինի իր հօր կամ եղբոր դէմ: Հեղինակը դժուարանում է հաւատալ այս բանին: Բայց այս ժամանակի, ո՛ր կը մնայ զըրջի պատմածը տէրտէրի աղջկայ մասին: Հեղինակը

լուծում է այս դժուարութիւնը. քրիստոնեայ հայոց հին թագաւորները բազմակի են ասում է նա. զաւուրը կարող էր խօսրովի կանանցից մէկը լինել եւ ոչ Վրթանէսի կամ Լուսաւորի աղջիկը: Այս դժուարութիւնը լուծելով՝ նա ընկնում է ուրիշ դժուարութեանց մէջ որոնց մասին սակայն չի խօսում: Նախ պատմագիրն ասում է, որ Վեծին հայոց տիկինն է եղած սաղորդը եւ քաջաւերդը. եթէ Լուսաւորի կամ Վրթանէսի աղջիկը թագուհի չի եղած եւ մեծին հայոց տիկին՝ ապա ուրեմն Լուսաւորի կամ Վրթանէսի քրեց աղջիկը տուած են խորովին իր հարճ... Եւ յետոյ՝ զըրջի տէրտէրն իր աղջիկը տալիս է խօսրով թագաւորին, որովհետեւ մանչ իսկներ, իսկ Լուսաւորիչ եւ Վրթանէս արու զաւակ ունէին:

Այսպէսով տեսնում ենք թէ երբ խօսրով թագաւորն է տէրտէրի ծառայ դառնում, նրա աղջիկն առնում եւ մէկ տարի մնում — այս միջադէպերի զգաւորական աստուածը Տարիւնք ապաւանիլը, մի տարի այնտեղ մնալը եւ Վրթանէսի աղջիկը կամ քայքայ առնելն է. իսկ երբ Շիրին շահն է օտար աշխարհ ընկնում, ծառայ դառնում է լայա մարդու աղջիկն առնում — զրանց պատմական աստուած Արշակի Պարսկաստան գնալն է եւ այն հանդամանքը, որ Շապուհն իր աղջիկը ռուղում էր» տալ Արշակին: Խորովի համար գուշակուած հեղեղը Մագդգթաց Արշաւանքն է, իսկ Շիրին շահի համար գուշակուածը — Ասորդատականի ճակատամարտը: Շիրին շահի զըրջի մէջ գուշակ հայեւորը — Ներսէս Միծն է, իսկ Զիւան շահի համար գուշակողը Յուսիկն է: Մենք տեսնում ենք, որ ոչ միայն զըրջից է շիրտնում անձեր ու ղէպքեր, տեղ ու ժամանակ, այլ եւ հեղինակն ինքը տեղիքում է այնպիսի շիրտ, որից շատ դժուար է գլուխ դուրս բերել:

Վէպի գլխաւոր հերոսն է Շիրին շահը, որ Արշակ Բ.ն է ըստ հեղինակի: Տեսանք թէ նրա մասին յայտնի են պատմութեան ինչ որ խօսրով թագաւորի մասին, որ իր մեծ հայրն է: Զիւան շահի որդին է, որ հեղինակի կարծիքով Տիրան Բ.ն է: Սա քեանակալն է Քաշիքի, որ Արատաշիր Սասանեանն է: Սրանք խօսք են տուած իւրա, որ եթէ իւրանց մանչ եւ աղջիկ ծնունդն իւրար հետ ամուսնացնեն, Քաշիքի կինը մի աղջիկ է բերում, անունը դնում են Բահր եւ չկա-

մեռնալով Ջիւսան շահի որդուն տալ, որ Շիրին շահն է, մի արկղի մէջ դրած՝ ծառն անցնում, որ երթալ շահանց (Բագաւորին հարս լինի)։ Շիրին շահի մայրը մի օր առում է որդուն թէ ինչո՞ւ չես գընում Բահրը բերելու։ Որդին գնում է իր բախորը գտնելու։ Նանդիլում է Սեւ եւ Սպիտակ դեւերի կռուին, անցնում է Սպիտակ գետի կողմը, մի չից կիսում է Սեւ դիւին, որը մի կէս թռչում է երկինք եւ վար ինչեւի՞նք՝ միւս կէսը անդունդ է տանում։ Սպիտակ դեւը քաջանց գզիր է (որ հեղինակի կարծիքով նշանակում է Արշակունեաց ծառայ) եւ ունի Բահր անուն եւ զոյր։ Շարուն նակելով ճամբան՝ նրանք մտնում են Գալ վարդանի քաղաքը, որ մի նախորդը է (ըստ հեղինակի նախարար) եւ օրը մի եղ է ուսում (ըստ հեղինակի՝ նշան նախարարական հարստաւարու թեանք)։ Քաղաքացիք Շիրին շահին հիւր են տալիս քալ վարդանի տունը, որ նրան ուտի։ Երեկոյեան քալ վարդանը գալիս է մի եղ կախած իր սահակին։ Քալ վարդանի կինը Շիրին շահին պահում է լինում խորի մէջ։ Մի պատահալ յայտնում է թագնուածի տեղը։ Քալ վարդանն ու Շիրին շահը մարտնչում են իրար հետ։ Շիրին շահը յաղթելով՝ տան սինը բարձրացնում եւ Գալ վարդանի ցցունքը գնում է նրա տակ, եւ նրա կնոջ հետ գիշերը պառնում, դրանից կինը մի մահն է բերում, անունը գնում են Վահկ վարդան։ Այնուհետեւ գնում են Սպիտակ դեւեց տուն։ Շիրին շահը չի հաւանում Սպիտակ դեւի ջըբոյը։ Երեւում է, որ մօր ասած Բահրը ուրիշ է եւ ուրիշ տեղ։ Երկուսը միասին գնում են իսկական Բահրը գտնելու։ Գալին են ծովի հանդիպում։ Քալ վարդան հովանքներու համար Սպիտակ դեւը Շիրին շահի ձեռք միայն երեք տուն է դեղում, որով ձին մեծ դժուարութեամբ իր հեծեակին անց է կացնում ծովից եւ ստակում։ Երեւ տակ գալիս են ձեռք ականջը կրծելու։ Մէկին սպանում է Շիրին շահը, երկրորդը մի խոտ է բերում ջըսում աստկածի բերանին, կնիկանացնում եւ նրա հետ մտնում ծակը։ Շիրին շահ նոյն խոտից քաղելով՝ կնիկանացնում է իր ձին եւ հրաշագործ խոտի պէտքերը առնելով՝ հասնում է Քալանց երկիրը (որ հեղինակի կարծիքով զբոյցը չգիտեմ է Ջիլանց երկիր հետ)։ Այստեղ Քալանց թագաւորը ուխտադրութիւն ունի Սպիտակ արքի վրայ (որ հեղինակի կարծիքով նպատ լեռն է, բայց չգիտեմ թեանք Բիւզանդիոսի կողմին է ընկած)։ Շիրին շահը գնում է կախարակման ծառի խորհուրդին թէ ինչպէս տիրանայ իր Բահրին։ Ծառի խորհուրդով ճամբարման երկուշաբթի գիշերը գնում է Փրէ-Քալման կամուրջի վրայ, որտեղ իցի պիտի անցնէր Բահրը։ (Նշելիս հեղինակի կարծիքով այստեղ Արածանու կամուրջը չգիտեմ է Փրէ-Քալման կամուրջի հետ, որ Բալթիկ գետի վրայ է (666)։ Բահրը անցնում է կամուրջով, տեսնում է Շիրին շահը ջնած է, վրձնում է արթնցնել, չի յաղդում եւ երեք ժող ձգելով՝ անցնում է Շիրին շահը նորից գիտում է ծառին, որ նրան բացատրելով խոտերի բուժական զորութիւնը, զարմնում է բժիշկ անունը գնելով

Ոչինչ։ Ոչինչը գնում է Քալանց թագաւորի մօտ, բժշկում նրա հիւանդ որդուն, որի անունը Սեւ Տուլդուլ է եւ որ Բահրի նշանածն է։ Իբր վարձ ստանալով բող ձին ակաթին, թուր կէծակին եւ թաղք ստապֆին՝ Շիրին շահը փախցնում է Բահրին։ Շահ լակամանը, որին բարեւ չէր տուած Շիրին շահը, թռչում է երկինք եւ հաւար տալիս թէ՛ Բահրին տարան։ Սեւ Տուլդուլը, որ հոյ էր խաղում, ընկնում է Շիրին շահի յետեից եւ հասնում նրան։ Սկսում է մի կռու։ Սպիտակ դեւը թափ մէջ նայելով՝ տեսնում է Շիրին շահին զուտնից մէջ, հասնում է նրան, պահում է Բահրին՝ մինչեւ երկու կողմերը անպարտելի մնալով՝ Բահրը յայտնում է թէ ինքը Շիրին շահի բախում է Միտանի քաղիւս եւ Սեւ արք։ Տուլդուլը դառնում է հարսնեղբայր իսկ Սպիտակ դեւը քաւոր Բահրը Շիրին շահի կին։

Անգ զբոյցը, որ հեղինակի ասելով պահած է պատմական յուշիկներ Արշակ Բ. ի եւ իր ժամանակի մասին։ Զբոյցին կցած ծանօթութիւններն իցից երեւում է, որ խոտնեւ ծառ կայ եւ Շահն աւանդում։ սրբածի զբոյցներ ճանքը ձգելու հեղեղներում, Ոչինչ անունը լինեցնում է Ողիւսականի Ողբը։ Երկինք թռչող լակամանի միջադէպը կայ վրաց Ամիրանի զբոյցի մէջ։ Ինչպէս տեսնում էք այստեղ ոչինչ կայ պատմական։ Բայց հեղինակը գտնում է ճշգրտական աստուած մինչեւ իսկ փորձում է պատմութիւնը ստուգել եւ լրացնել մէկի հիման վրայ։ Նրա կարծիքով Բահր-Ողիւսակաղան է, Արշակ Բ. ի կինը։ Գտաւ բազիլո չկայ, որ Բահր-Բահրին Ողիւսակաղան է, որովհետեւ Բահր ծով եւ Բահրի ճուռու կամ ծովային է նշանակում, հայերը համարեցին ստել են ծովու աղիկ, թեւեւ Ծովիւնը կամ Ծովեան, ջանի որ Ողիւսակաղան քաղիս է Կ. Պոլսից եւ Սեւ ծովով, որ երեւի արարական շրջանում թարգմանուել է այդպէս, ինչպէս որ թաթարական շրջանում Անուշայ շահը թարգմանուել է Շիրին շահ եւ այս էլ նորագոյն իլլյուստաները թարգմանած են Քալցը թագաւոր (591-92)։ Սեւ Տուլդուլը կոնստանտին է, որի նշանածն էր Ողիւսակաղան։ Իսկ սեւ Տուլդուլի հիւանդութիւնը. — Կոստանդին Մեծի բողոքութեան զբոյցն է, որ անցած է Կոստանտին վրայ, անուանելի չլիթում։ մով։ Բայց Կոստանդին Մեծին բժշկած է Ս. Սեւրբետորոսը եւ ոչ Արշակ Բ. — Եփոթումով այդ միջադէպը վերագրում է Շիրին շահին այսինքն Արշակ Բ. ին։ Բայց ըստ մեր վերջի Բահր Քալանի կամ Լէնկիթիմուրի աղիկին է եւ արկղի մէջ զբոյս կուած է Ջիլանց երկիրը, միաժամանակ նա հաւարում է Քալանց հարս։ — Դրա պատճառն այն է, որ երկիրները չգիտեմ են եւ Ողիւսակաղան ու Փառանածն ծուլում են իրար, իսկ այս վերջինը Գնիկ կինը լինելով՝ Քալանց հարս էր։ Քալ վարդանը — Մամիկոնեանց նահապետ վարդանն է, որին սպանեց Վասակ Մամիկոնեանը, որ Սպիտակ դեւն է։ Վասակի զորքը վերագրում է Շիրին շահին։ Վարդան նահապետի կինը իր ամուսնու մահը տեսնելով վրձնումով ծնում է իր որդուն, մինչպէս զբոյցի ասելով

այդ ծնունաճը Շիրին շահից էր: Սրանք չփոթու-
թիններ են, որ յատուկ են ժողովրդական զե-
րայցներին ու վեպերին: Շիրին շահը ծնում է
հորմոյնին՝ իր թիկնոցը գլխին քաշելով: Բանը
փոքրում է զարթոնքներ և լայնողելով՝ զրպանը
վեգեր է ձգում և անցնում Այստեղ կայ մի քնած
մաղը, որ ծածկում է թիկնոցով: Այս միջադե-
պի պատմական հիմքն էս գտած է հեղինակը:
Արշակ Բ. որը սպասում էր Գնեկի մահաւան լու-
րին՝ լսելով թէ Ներսէս Մեծը Գալիոն է իր վրանը,
մեացնում է քնած՝ գլխին քաշելով իր սամոյը:
Այս քնածը եւ թիկնոցը: Բայց Արշակ քնած չէ,
այլ քնած է մահաւան, իսկ Շիրին շահը քնած է
իրօք: Արշակ չէր կամենայ, որ իրան արթուն
համարեն, մինչ Շիրին շահ ուրախ կը լինէր, որ
արթուն լինէր: Արշակ սպասում է Գնեկի մահ-
աւան լուրին, իսկ Շիրին շահ Բաբրի անցնելուն:
Արշակին արթնցնում է Ներսէս Մեծ, իսկ Շիրին
շահին իր նշանաճը. մէկը քնած է մեհաւան իր
վրանի մէջ, միւսը քնած է կամուրջին, Ներսէսն
Արշակի զրպանը վեգեր չի ձգում և այլն: Լեզի-
նակի համար բաւական է, որ Արշակ Բ. քնած է
և գլխին քաշած է իր սամոյը — զրանով զրու-
նուած է վիպական միջադեպի պատմական առ-
տառը, որ «Նշարիտ պատկեր», մի պատմական
«Իրողութիւն» (667):

Քաջը պարտաւորով՝ իր քոյրը տալիս է Ջի-
ւան շահին (Տիրան Բ.): Եւ խառնուած է նրան
ծառայել: Մի օր Քաջերի գանձատան սենեակնե-
րից մէկը բանալով՝ Ջիւան շահ տեսնում է եր-
ւու չքնած կանանց պատկեր և ուշադրաբէ է լի-
նում: Քաջերն ուզում է նրան ողանել, քոյրը
չի թողնում: Երբ ուշքի են բերում՝ Ջիւան շահ
Քաջերից պահանջում է այդ չքնածներին: Քա-
ջերն առում է թէ զրանք ուրաք՝ գիշերներն
իջնում են շուր թափելով, եթէ մարդ են տես-
նում իրենց մարդավայրի մէջ՝ կուռւմ են նետը,
յաղթում, տանում տուն, սրենից կապում, զըլ-
խին ճրգ պատում են տակը կար անում: Իրան
մի անգամ այդ օրն են ձգել, ուստի վախենում
է նորից գնալ: Ջիւան շահը սիրտ է տալիս թէ
միաթիւ կերթանք: Գնում են: Երբ Ջիւան շահը
հետանում է ձիերին նայելով՝ աղիկներն իջնում
են, Քաջերին բռնում, տանում են տուն ու սրե-
նից կապում: Ջիւան շահն սպասում է մինչեւ
միւս ուրբաթ գիշեր. յալողում է երկու քոյրե-
րին ծամերից բռնել և նրանք անձնատուր են
լինում: Քաջերին արձակում են կապանքից. մեծ
քոյրը Քաջերն է առնում, փոքրը՝ Ջիւան շահը
և խօսք են տալիս, որ եթէ մահւ ու աղիկ ու-
նենան՝ իրար կես ամսանացնեն:

Ինչպէս տեսնում էք մի շատ հին հէքեաթ:

Բայց հեղինակն այստեղ ևս գտնում է պատ-
մական յուշկներ: Նախ՝ ո՞վ է Քաջերը: Մի հայ
զրոյցի մէջ Զարամազի որդի Թեմուրը կուր է
անում Արշակ Երանելու հետ: Այս Արշակ Երանե-
լին հեղինակի կարծիքով Արշակ Բ. ն է, իսկ Թեմ-
ուրը պարսից վեպի Թեմուրնաւն է, որ մերազ-
նացած է և զարձած Արշակ Երանելու եղբոր որ-
դին: Դարեր յետոյ այս Թեմուրը չփոթւած է

Լէնկթիմուրի հետ, իսկ Լէնկթիմուրը նոյն դերն
է խաղում մեր զրոյցներից մէկի մէջ ինչ որ Գու-
շերը: Լէնկթիմուրն ու Քաջը փոխարինած են ի-
րար, որովհետեւ երկուսն էս «Արեւելքից Պարս-
կաստանից են արշակել» (574-5): Քաջը անուան
վերջին վանկը հեղինակին յիշեցնում է Արտա-
շիւր անունը եւ նրան հուսանական է թւում որ
Արտաշիւր Բաբականի վեպից ծագած լինի մեր
վեպի Քաջը անունը (577): որով Քաջը եւ Ար-
տաշիւր Մասանեան յոյնանում են: Այնուհետեւ
մենք տեղեկանում ենք, որ Քաջերն այն Ներսէ-
զօրաւորն է որ բռնեց Տիրանին և տարաւ Պարս-
կաստան (531): Իսկ մի ուրիշ տեղ խօսելով Ար-
շակ Բ. ի Պարսկաստան գնալու մասին և նապո-
հի, որ Հայաստանն աւերեց՝ առում է. «Անա թէ
ո՞վ է Լէնկթիմուրը եւ Քաջերը» (647): Բայց մեր
զրոյցներից մէկի մէջ Քաջերի եւ Լէնկթիմուրի
գերի մէջ երևում է Սև դեւը, որ հեղինակի կար-
ծելով իրողութիւն Մամիկոնեանին է, որով զուգա-
գրւում են Թիմուր - Թեմուրաբա - Քաջը - Արտա-
շիւր - Լէնկթիմուր - Մանուէլ Մամիկոնեան: Միեւ-
նոյն միջադեպը պատմում են եւ Ջիւան շահի
Շիրին շահ Բ. ի մասին (Արշակ Գ. բոտ հեղինա-
կի), վերջին գէպըսում յարմար է, որ չքնած քոյ-
րերի ճրգալով Մանուէլ Մամիկոնեանը լինի,
որովհետեւ նա իր աղիկին իրօք տուած է Արշակ
Գ. ին. իսկ առաջին գէպըսում՝ ո՞վ Լէնկթիմուրը
կարող է լինել, ո՞վ թեմուրը, ո՞վ Արտաշիւրը:
Լեզինակը այս զփուարութիւնը լուծում է, ասե-
լով թէ խօսքով Մեծի մասին հուսանօրէն մի վեպ
է եղած և այդ վեպի մէջ անշուշտ Արտաշիւր, որ
յետոյ անցած է Տիրանի վեպին: Բոլոր անհիմն
ենթադրութիւն: Լեզինակն այնուհետեւ պարզում
է նաեւ թէ ուրեք են այն չքնած քոյրերը, Վեգ-
նուական տիկիները եւ այդ կողմերը մշտական
ընկալութիւն հաստատող, մասնաւոր մասնաւոր
չլքեք ինչ տխուր վայրերում պարզ Արշակոնի
փափկասուն օրիորդներն ու տիկիներն են ան-
շուշտ հուրի փարիները (361): Բայց Դ. դարում
Արշակոնի փափկասուն տիկիները վիթխարի
ողամաբարկան կես մարտնչած են, նրանց յաղ-
թելով՝ սխներից կապած են, նրանց գլխին ճը-
գը գնելով՝ տակին կար կարած են: Բանը, որ
Ուլիպիական է, այդ Քաջերներից որ և է մէկի
աղիկին է եղած և այնքան հզօր, որ նրա զար-
կից հայրը պատին զլպլելով՝ քանդած ու դուրս
է ընկած...

Բաական է մի աննշտն նմանութիւն, որ հե-
ղինակը գտած համարի որ և է վիպական միջա-
դեպի պատմական աստատել: Տեսնում, որ Քա-
ջը և Սև դե (Մանուէլ Մամիկոնեան) վիճակա-
կից են: Սև դեւ եօթ տարի երկու չքնածներից
գերի է եղած: Միւս կողմից Փաստող պատ-
մում է, թէ Մանուէլ Մամիկոնեան մահաւան մահ-
էի մէջ իր անթիւ վերքերից բացեց և ցոյց տուաւ
ներկաներին: Գիտենք նաև, որ նա Հայաստանը
կառավարեց եօթ տարի: Վեպըս վերքերի յու-
շիկներն են մնացել անշուշտ մեր նոր Քաջան
տան վեպում, եւ այդ այս չարարանքներն ու
տանջանքներն են, որ նա կրում է եօթ տարի եր-

կու ջորերից, որ նրա եօք տարուան իշխանութեան ակնարկ էր գրում եւ ընդգծում է հեղիւնակը (520), Համեմատութեան եզրը այստեղ եօք օտար բառերն են. ուրիշ նմանութիւն չկայ:

Բայց հեղինակին բառական է մինչև իսկ լոկ մի թիւ, որ գտած լինի պատմական աստուած: Տուգորու (= Կոստուս) 15 օտիւ իւրեան է. նրան բժշկում է Ոչինը (Շիրին Եւսէր) (= Արշակ Բ.), փաւրտոս պատմում է թէ Վաղէս կայսրը Ներսէս Մեծին հրաւիրեց իր հիւանդ զաւկի վրայ աղօթք անելու: Ներսէս պայման դրեց որ Վաղէս 15 օր ուղիղ հաւատի գայ, այլապէս որդին կը մեռնի: Պատմելով այս միջադէպը, հեղինակը գրում է. «Հիւանդութեան հետ 15 թիւն էր այսպէս, թէ՛ հուզ. օր եւ ոչ տարի, մի կերպ պարզուում է» (597): Այսպէս ուրիշ կերպը պարզուում են բազմաթիւ միջադէպեր եւ պարզապէս Ռաբակ շահը, որ հեղինակի կարծիքով մեր Պապ թագաւորն է, իր հօր տուած ասանկերով ծառաներով գնում է որս: Մի եղնիկի հետապնդելով՝ հեռանում է իր ծառաներից: Լէնկթիմուր գալիս է կոտորում Եւրբանց, Վապու Ձիրաւ դաշտում 12 յոյն լեզդոններով, յաղթեց պարսկներին» գրում է հեղինակը: 12 թիւը այնպէս է միապնդում հեղինակի դատողութիւնը, որ նա այլ եւ չի յիշում թէ 12 ծառան Ռաբակ շահի հայրն էր տուած է ոչ ոյի. զանազի կայսրը, որ Ռաբակ շահ որս է անում եւ ոչ պատերազմ, որ 12 ծառան ինն յաղթում, այլ կոտորում են: Փաւստոսն ասում է թէ յոյներն զօրքը վեց հարիւր բիւր էր: Ամմիանոս աւելի համեստ թուել է տալիս: Ալլիստեղ աչքի է ընկնում 12 թիւը, գրում է հեղինակը, որով ջաջանց վէպն աւելի մօտենում է պատմութեան, քան Բիւզանդը (799):

Մի պարզապէս, որ ստուպնդիլ երեւոյթ ունի, հեղինակի համար զարձած է ամուր կռուան իր վարկածը յօրինելու: Ամմիանոս որ Պապ թագաւորին անուանում է Պարա, իսկ հեղինակի կարծիքով վէպի Ռաբակ շահը մեր Պապ թագաւորն է: Պրոկոպիոսն լատագոյն ձեռագրի մէջ անկայն այդ անունը գրուում է Պապայ Պապա ձեւը բանասէրները համարում են մի սխալ գրութիւն, որ արդիւնք է Ք եւ Ր գրերի չփոխման: Այս խնդրի յաջող լուծումը հեղինակին չի գտնուում: Ինչպէս պիտի Պապ անունը Պապա լուծուէր. եւր տեղից գուրա պոծաւ լատիներէնում վերջին այբը: Եթէ Ա. Մուրելիանոսը ուղեւոր Պապ անունն լատիական կամ թէ՛հուզ յուշական ձեւ վերջաւորութիւն տալ պիտի կոչէր Պապէն, Պապոս կամ շատ շատ Պապոս, բայց ոչ երբեք Պապոս գրում էր (677): Այսպիսով նա կարծում է, որ Պապա ուղիղ գրութիւն է, իսկ այդ ձեւը նման է Ռաբակ բառին, որ վէպի մէջ Պապ թագաւորի անունն է համարում: Նկատենք այստեղ, որ զրոյցը յիշում է մի տեղ Պապ թագաւորի Ռաբակը, բայց անցողիկ եւ նա մի կերպ ունի Ռաբակ շահի հետ, որ գտաւ անձն է, շեղիւնակը կարծում է, որ Ռաբակը մականունն է: Եւ որովհետեւ որսի շնորք նրա կարծիքով այդ անունն են կրում հաւանորէն իրենց բարաւորու-

թեան պատճառով, ուստի գրում է. «բարակ ուրեմն նշանակում է նուազ, նիհար, ինչպէս անհասարակ լինում են կախարչները, ինչպէս համարում է Պապը» (88): Իսկ եթէ հարցնէք հայա ո՞ր է հայոց Ռաբակ բառի բուն կը լատին մէջ, և ինչու Պարա եւ ոչ Ռաբա, դրա պատճառն ասում են համարում է հեղինակը ասելով թէ հաւանորէն Ամմիանոս այդ անունը լսած է Հայաստանի հարաւում եւ հայ զինուորներից, իսկ Հայաստանի հարաւը արեւմտեան բարբառների շրջանն է, ուր միշակ Բ. ին փոխարինում է լեռկ վ-ն և նկատելով, որ վանի բարբառում վերջին կ-ն երբեմն դառնում է յ, նա կարծում է, որ Ամմիանոս կարող էր լսած լինել Պարայ, Ալլիստեղ թէ այնպէս Պարա ձեւը հաւանորէն ձայնը է Ռաբակ մէկը եղբակացուն է հեղինակը: Այսպիսով մեր պայթուցիկներ տարբերացում եւ որոշ զեպքերում կ-ի յօլտաւորը հեղինակը գրելի մի հարաւումով մղում է մինչև Դ. դարը, խնդիրներ, որ ընդունած ու պարզուած չեն լիովին, բայց մանաւանդ այն իմաստով, որ ենթադրում է հեղինակը,

Այս խախտաւ հիմքով արա նոյնացած են Պապ թագաւորը և վէպի Ռաբակ շահը և այդ հիմքն է, որ զարձած է հաստատուն կռուան վէպի հերոսների ճշւղագրութիւնը կազմելու և նրանց նոյնացնելու: Արշակունի թագաւորների հետ: Վերջին հետև Ամմիանոս Պապին Պարա է կոչում, գրում է հեղինակը. «Եւ երբեք Պապի մեր վէպի Ռաբակ շահը պիտի լինի, քանի որ այդ երկու անունները համարեա միևնույն են»: Իսկ եթէ Ռաբակ շահը Պապն է, ապա վերի Թորով թագաւորը պիտի լինէր Թորով Կոստակը» (326) եւ այսպէս նոյնացում են և միւս շահերն ու թագաւորները, որովհետեւ այս չաջող լանդպետները (Թորով-Թորով-Կոստակ. Պարա-Ռաբակ) համարում են հեղինակին թէ իր ենթադրութիւնը չաջող և հաւանական է» (321):

Այս ձեւով նա նոյնացնում է վէպի Դիլիմ (որ և Տիւլիւն) արհմի Տիգրանի հետ, որ Արշակ Բ. ի որդին էր եւ որի մասին խոսում է Պրոկոպիոսը, նկատելով, որ այդ անունների առաջին վանկերը — Տիւլիւ — նման են և որ Ժողովուրդն անհանաչելի կերպով փոխում է յատուկ անունները, նա գալիս է այն եղբակացութեան, որ ԱՏիլին ձեւը պակասին է Տիգրան անունն կախալը» (338), առաջին ի-ն աղգած է ա-ին վրայ՝ զարձանելով ի, իսկ ի և Ե ձայների փոփոխութեան մասին ճաշխարհ է խօսիլն անպաշտ» (399): Նոյն Տիգրան նշանակում են իրար հետ, նկատելով որ դրանց վերջին վանկերն իրար նման են և հայոց լեռնի մէջ կայ Տրդատ և Երզրտ փոփոխակները: Գալով Արշակ Բ. ին, որ վէպում երևում է Շիրին թագ անունով, դրա պատճառն այն է, որ թագաւորական տիրապետութեան շրջանին հայ Անուշ շահ անունը թագաւորանա են թուրքերէն, իսկ Անուշ ձեւը նախապէս եղած է Անուշայ, ինչպէս արտաբերած է վիպասացներից մէկը, իսկ Անուշայ շահ պիտի նշանակէր Անուշ բերդի մէջ եղած շահ

հետևապէս՝ Արշակ Բ. (718), Բայց վէպի մէջ Շիրին շահ է կոչուում եւ Արշակ Գ.ը. դրա պատճառը հեղինակը համարում է երկու թագաւորներին Արշակ անունաց չլիովութիւնը եւ յետոյ այն հանգամանքը, որ թուան անունը եովորաբար նոյն է լինում իր պապի անունն հետո՝ Արշալայկան եւ հայրապետական անձերի եւ գործերի այս զուգորութեամբ հեղինակը կարծում է, որ իր ենթադրութիւնը պատմութեան եւ Քաջանց վէպի առնչութեան մասին «ոչ միայն վարկած, այլ իրականութիւն պիտի համարուի» (СОО):

Ս. Կանայանն գիտէ, որ «ժողովրդական վէպին յատուկ է դարերով հեռաւոր անցքեր եւ անձեր եւ վայրեր նմանութեամբ ձուլել եւ նոյնացնել եւ այդ այն աստիճան, որ գիտական քննադատութիւնը հազիւ հազ կարողանում է ճանաչել» (66), եւ լայնօրէն օգտագործում է այս հանգամանքը եր ճշգումները եւ նոյնացումները կատարելու ժամանակ՝ Միւս կողմից նա համոզուած է, որ Քաջանց վէպը ի՛նչ ձևով է պատկերացնում անցքերը, բայց երբեք չէ յորինում (764), ուստի վէպի պատմածները հայալո՛ւ իւր անդ է ընդունում եւ յաճախ փորձում է վէպով անցքեր ուղեղները ճշդել եւ հայոց պատմութիւնը ոտուզել ու լրացնել: Քանի որ Շիրին շահ (Արշակ Գ.) «քամու պէս մի բանից» տարուած ընկնում է մի զլու մարդուս տուն, որ հեղինակի առելով Անդուկ Սիւնին է, եւ զառնում է նրա տան փետնի՝ պէտք է կարծել, որ Արշակ Բ. իր նեղ օրերին ապաստանում է Սիւնիք եւ առած Անդուկ Սիւնու աղ-շիկին: Այդպէս ենթադրում է, որովհետեւ, զվէպի յորինումում, Կամ Թէ՛ Շիրին շահ Բ. (Արշակ Գ.) իրեք շաբաթ էր վաղի վարդանի-մանուկ վարդանի կինը, այդ պատմութիւնից յայտնի է, բայց անհնաւանական է, մանաւանդ որ մի հէքեաթի մէջ ինչ որ վարի վարդան յափշտակում է աղա աշխի կինը, որ յետոյ ուշեր մի հրաշքով յիտ է ստանում. «Հէքը, ուրեմն ստանաւէրը, դրում է նա. ինչպէս կոչում էին ոչ միայն մեր նախնաւոր նահապետները այլ եւ թագաւորները» (722), Թէեւ այստեղ վարդանի է աշխի կինը փախցրելու է ոչ հակառակը:

Քաջանց թագաւորի ռուխադրութիւնը հեղինակին առելով Ս. Յովն. Մկրտչի տունն է, որ կատարում էր Բագրատին դիւզում եւ ուր Գնէշն եկաւ, Փառանձեմի հետ: Այս առիթով նկատում է՝ «վէպը պահել է դարմանայի մանրամասներ այն անցքի, Արշակ Բ. այս տունին ի հարկէ ձիով է գնացել, բայց այստեղ կարող էր հասկացուել եւ Գնէշը, որ Արշակ Բ. ի հետ վէպում մի է ձուլուած, որի ձիով եւ Փառանձեմի ղեպակով բանակ մտնելը վկայում է Բիւզանդաւրանը» (հետեւում է Փառատօսի համադրութեան վկայութեանը): Իրեք զգալի մանրամասնութիւնն է վէպի Շիրին շահը իր ունի. Արշակ Բ. ը նոյնպէս... Բայց Արշակը չէ, որ ձի է նստած, այլ Գնէշը. ու թէեւ այս երկու անձերը ձուլուած է ենթադրում հեղինակը, բայց ո՛չ Արշակը եւ ո՛չ Գնէշը Բահր չեն որոնած, որ ըստ հեղինակի Փառանձեմն է ձուլուած Ոլիմպիադային, քանի

որ Գնէշն արդէն Բահր-Փառանձեմի առուսինն էր, իսկ Արշակ Բ. դեռ չէր մտածած Բահրի առուսինը գտանալ: Եւ յետոյ՝ «ուր մնացին կամուրջն ու լուռը կամուրջի վրան: Այս ձեւով պատմական հիմք ու առատութեան այնքան դիւրին բան է գտնուում, որ հեղինակը իրաւամբ նկատում է թէ՛ զերթերցողը կարող է շատ բան ինքը գիտել եթէ՛ Փ. Բիւզանդացու այս երկու գլուխները Արշակներին մասին կարգալ եւ համեմատել վէպի Շիրին շահերի հետ: Անշուշտ, երբ ձիով ուխտի գնալը համարուի զարմանալի մանրամասնութիւնն ամեն մի ընթերցող կարող է հարկութեամբ պատմական լուրջ գտնել Փառատուր մէջ, որ գտն ու ծածկեն Քաջանց վէպի զըրուապները:

Կարծում եմ բաւական է, Այս ընդարձակ գործի հարիւրաւոր էջերի վրայ կարելի է գտնել այս կարգի բազմաթիւ մերձեցումներ, ճշգումներ, նոյնացումներ, չլուրկներ: Եւ շատաւաներ, որ աւելորդ եմ համարում յիշատակել, խնայելով հեղինակին, Ձեզ եւ ինձ: Դուք տեսնում էք, որ հեղինակն ունի ծանօթութեան առատ պաշար եւ հետազոտութեան ուղիւ ճանապարհ, բայց իր բանասիրական գատողութիւնը մարդուած չէ եւ ըննական կարողութիւնը՝ զօրաւոր: Իր միտքը դիւրահաւան է եւ բանասերի խտապահանջը զգուս անմոռելի: Նեղիմակն առատութեամբ փաստել է կուտակում եւ դիւրութեամբ հանգիտութիւնն նշմարում, որ սակայն բանի չեն ծառայում: Իր փաստագրութեան բոլոր նիւթերը վրկայում են նպատակից, իսկ իր նշմարած հանգիտութիւնները աւելի հանելուկների լուծումներ կամ լաւ եւ՝ երազական միկնութիւններ են, քան գիտական ստուգութիւն՝ հիմնուած որական եւ վաւերական փաստերի վրայ: Բարեմիտ համարութեամբ ես երկու անգամ կարգալ այս ստուաւ աշխատութիւնը եւ բազմիցս վերանայեցի նրա այս կամ այն բանից, բայց անկարող եղայ այն համոզումը կազմել, թէ հեղինակը գտած է Արշակունեաց վէպի մնացորդ ժողովուրդի յիշումներն մէջ:

Քննուած զրոյցները երկար ժամանակ աղւընով հայ միջավայրում՝ առած են հայկական եւրանգը: Մի քանի պատմական անուան եւ հայերենի միջավայր — ահա բոլորը: Նրանք չունին այնպիսի յուշափելի նշաններ, որ անտարակելի դարձնեն նրանց ծագումը հին վէպից: Նրանք պահած չեն այնպիսի հետքեր, որ թոյլ տան նրանց եթէ ոչ համարել «Պատմութիւն վէպի մէջ» ինչպէս որակած է Ս. Մալխասեան Քաջանց տունը, գործը զպատմութեան հէքեաթացում: Սրանք նոյն իսկ զրոյցներ չեն, այլ պարզապէս հէքեաթներ, որ զարեք պարած են հայ ժողովրդում: Մինչեւ ունինք պատմական վէպի հասակտորներ եւ ամփոփումներ Մ. Խորենացու պատմութեան մէջ, նրանք հնութիւնն առնուհանդէպ հանում են միջին եօթներորդ դարը: Երեք զրոյցների եւ այս վէպերի ոճը մատնան է նրանց խորքի տարբերութիւնը: Նեղիմակի կարծեմով Քաջանց վէպը յորինուած է Դ. դարի կիսին եւ ամբողջացած է:

զարի սկիզբը: Եւ ա՛յն վիպական զարոյցի արդիւնք է Թուսմ հեղինակին որ ստեղծած է Արտաշէսի վէպը (818)՝ Բայց ի՞նչ նմանութիւն կայ զըրոյցներէ հ մեր հին վէպի ոճի միջեւ: Մինչդեռ Արտաշէսեան վէպը պատմական է իրապաշտ ոճ ունի, Փայտանք տան ոճը հէքեմարտյան է, Մարք վիպասանները հէքեմարտի չէին յորինում, այլ պատմական գրուածքն էին վերաբարտադրում վիպական ոճով: Դրանք գործ չունին զեւերի հետ, որոնք կէտը երկինք է Թուսմ եւ վար իջնելով՝ միւս կէտը անդունդն է տանում: Նրանց վէպերի մէջ չկան դիւմայներ, որ մարդ եւն ուտում, չկան աղչիկներ, վերագնեբին յաղթահարելով՝ կապում են սիրանք եւ զուխներին կամ ստնեբին ճրագ զնուսմ: Ո՛չ կախարդական խօսքն ծառեր կան այնտեղ, ո՛չ բոխիկ մկներ, Զիւերն այնտեղ անցնում են գետից: Ե ո՛չ թէ զեւած ոտքերով ծովեր են կտրում: Այնտեղ էքումու պէտ ճաներ մարդ չեն Թոքեմու օտար ախարհներ, Թագաւորները մշակ չեն դառնում հ ոչ տէրտէրի աղչիկները թագուհի: Փայտանք տան հէքեմարտյանը շատ աւելի հին կենցաղի հետքեր ունին, քան մեր պատմական Դ. զարը: Նրանք ո՛չ մեր հին վէպի ո՛չ նրա ոճի ժառանգորդը չեն: Մեր հին ոճը կարելի է նշմարել փաստաստի պատմական մէջ, բայց բընաւ Փայտանք վէպում, որ մի հիւսուածք է Թափառիկ մտորենքի եւ կենցաղական զեղնակ զընթերի, շին հէքեմարտի են, որ գիւղական միշտ վայրի մէջ ապրելով զարեթ՝ նրա կենցաղական գծերն են առել: Պատմական անուաններից միայն մէկն է, որ կրած է հերոսներից մէկին, ու նաեւ Փայ վարդան անունը, որ կրում է մի ուրիշ գործող անձ: Պայը յիշու է իբրեւ Փայտանք Թագաւոր, բայց անցողական է Փայտանք վէպի հերոսների շարքում չէ: Վարդ խառնումը (որ եւ Սալլի Խուրիանը, որ հեղինակը համարում է Մանուէլ Մամիկոնեանի աղչիկ վարդապետախոր, մեկնելով Սալլի Խուրեմանին իբր Խուրէ-Ման = Մանուէլի փառք՝ մեկնողական եւ նոյնացման այն մարդանքներից է, որոնք նմանները տեսանք վերը): Այսպիսով այս ընդարձակ գործը իր հիմնական զոյգի մէջ պէտք է վրիպած համարել:

Ս. Կանայեանի աշխատութիւնը ոճի եւ յորինուածքի թերիներն ունի: Լաւագոյն կը լինէր բարբառական բնագիրները տալ եւ ապա նրանց հիւսուածքը. այդ է քրական կարգը: Ներկահը չի գտնում բարբառական բնագիրները եւ նրանց հիւսուածքը տալով: Գործի ընթացքին երբ քըննութեան է առնում քոյցներից այն կամ այն գըլուխը՝ նա նորից մի անգամ պատմում է նրանց բովանդակութիւնը եւ իր պատմածի զլիւն զնում է դրա համառօտութիւնը, որով գործը ստուգանում է անսոցի: Որ եւ աննշան պարագայ փաստարկելու համար նա շուայում է իր տեղեկութեանց պայտը, փոխանակ մի երկու ցուցում անելու: Կայ մի ամբողջ գլուխ (Ժ. Սպիտակ ու Սե. զեւ. վառանք եւ վառան Մամիկոնեան ժողովորդական աղօթքներում), որ բռնում է 39 էջ (475-514) եւ ոչ մի բանի չի ծառայում: Զար աչքից պահելու մի աղօթքի մէջ յիշատակում է

Սե. սար եւ Սե. մարդ, իսկ մաղածիք (սիրամայ) հեղածին ըռածք մի ուրիշ աղօթքի մէջ յիշում: Սպիտակ սար եւ Սպիտակ Յովաննէս: Այսքանը բաւական է, որ հեղինակը Փայտանք վէպի հետք գտած լինի, Փայ վարդանի որդին զքոյցներից մէկի մէջ կուտում է վարի վարդան. Նոյն զերը կատարող անձը միւս տարբերակի մէջ կուտում է Վառվառն Յովաննէս: Այս Յովաննէսին հեղինակը նշմարեցում է Եւրօթքի Սպիտակ Յովաննէսի հետ իսկ որան՝ Սպիտակ զեւի հետ, որ վառակ Մամիկոնեանին է(“): Որպիսի՜ տպաւորութիւն աւելն պէտք է թողած լինի Սե. Մարդ՝ վառան Մամիկոնեանը ու Սպիտակ զեւ Յովաննէս Վառակ Մամիկոնեանը ժամանակին, որ կարողաւ նային խորին հնուքեան կնիքը կտող այս չարի եւ բարու, խաւարի եւ լուսոյ կուսի աղօթքներում հակամարտիկ ուժերի արտայայտիչ համարուելը (479) բացաղականում է հեղինակը...

Իր ոճը լոյծ է եւ հապաղ. զրա պատճառը իր անամիտի փաստարկութիւնն է եւ զերբաբաւան մտածմամբ: Թօռելով որ եւ Նիւթի մասին՝ նա նկատում է այդ Նիւթի կապը մի ուրիշ Նիւթի հետ, որի մասին նոյնպէս մի խօսք է առում եւ յետոյ վերջինս իր յետեւից բերում է մի երբորդը, որ անյիշատակ չի մնում, որով գրութիւնը միշտակալ եւ կից խօսքերի մի թնիւղ է դառնում եւ բերած փաստի ապացուցական արժէքը նոսմանում է եւ յանախ չքանում: Շատ զոտար է այն օտոդոնին մաքի ընթացքին հետեւել: Որ եւ է անուան նոյնացում կամ որ եւ է ցուցում անբաժան ընկեր են դառնում իրար եւ միշտ զոյգ կամ երեքով չլքապայում են գործի բովանդակ տարածութեան վրայ: Անուանի մի նմուշ.

«Արդ ըստ N^o. 2 ՂԱ, Մը-ի Ա. Սե. զեւ. իւր քոյրը տալիս է Բարակ շահին եւ ըստ N^o. 3 ՂԱ ՆՅՈ-ի Քաշերը իւր քոյրը՝ Ջիւան շահին, իսկ ըստ N^o. 1 ՆՅՈ-ի զը-ի Լէնկթիմուրը իւր աղչիկն է տալիս Բարակ շահին. Բ. Սե. զեւ. Լէնկթիմուրը ու Բարակ շահը եւ Քաշերն ու Ջիւան շահը դառնում են քննեկանքներ, առնելով երկու հարազատ քոյրեր, շահերը պտտիկը, խօսքում, իսկ Սե. զեւ. Լէնկթիմուրը եւ Քաշերը՝ մեծը, գէշը, եւ վերջապէս Գ. Սե. զեւ. վերջին ամուսնութիւնից ունեցած իր դուստրը վարդ խառնումը տալիս է Բա-

(*) Այդ կախարդական աղօթքի Յովաննէսը շատ աւելի վաղեպական է Թուսմ, քան մեր պատմութեան Գ. զարդ Գ. Զ. Այն անուան մէջ կտրում եմ պէտք է անօնել այն Ուանէլը որ կ համարաւարով կը նուսմերական-բարեկալան ամուսնին աստօյնը: Էւս քոյր աստու եւ, ինչպէս նաեւ Իշտար-Շաւմիրում, անոր համար այ ծան կերպարանքով կը ներկայացուէր: (Հ. Ա. Մատիկան. Արա գրիցիկ. էջ 57): Աղօթքն ասում է... Սպտակ սարի տակիցը | Սպիտակ Յովաննէսն դուր եմու | սպիտակ քոյրը մտաւ | սպիտակ ծուկը բռնեց | ամենօր բռնեց | անդունդ մորթեց | անդունդ (անտիրոջիկ) կկտրու | մատածուէն էլաւ: Ուանէլի Յովաննէս փոխուիլը ժողովորդական նոյնացում է. հո՛. Օհանէս ծուկը. նաեւ Յովանն մարգարէի անասպիլը:

բուն շախի տղայ՝ Անուշ շախ՝ Շիրին շախին, 1 էնկ-
թիմուրը իւր գուստը Բահր՝ ծովը Բարակ շախի
տղայ Շիրին շախ՝ Քաղըթ Թագուսորին, իսկ Քա-
շերը իւր գուստը Բահրը Ջիւան շախի որդի Շի-
րին շախին... Այս երեք խնամական կապերից
միայն վերջին Գ. Գ պատմական իրողութիւն է,
որովհետեւ վէպի Վարդ խանուսը պատմութեան
Վարդանգուստն է, որ Սե. զե. Մանուէլի գուստն
է եւ Բարակ շախ, Պարա Պապի որդի Անուշ շախ՝
Շիրին շախ. Արշակ Գ. ի կիսն է եւ աւելնա Պա-
պի հարստը: (521-22):

Այստեղ ռՊՈ. 2 ՀԱ Մըն նշանակում է Ս. Հայ-
կունու գրի առած եւ Արարատ ամառգրի մէջ
տպուած Միկայ թարգմանով զրոյցը, որ հեղինա-
կը համարագրած է իբր ՌՊ. 2 զրոյցը, եղածը ե-
րեք զրոյց է եւ երեք տարբեր բարբառով եւ կա-
րող էին իրենց թարգմտական որակումով տա-
րբերուիլ եւ աղատուիլ այդ ցուցանանքներէց,
քանի որ գրքի սկզբում արդէն յիշուած է թէ
«որ զրոյցը ո՛վ է գրի առած եւ ո՛ր է տպուած»:
Մի անգամ որ յայտնի է թէ Բարակ շախը Պարան
է, իսկ Պարա-Պապին է, Շիրին շախ Բ. Անուշ շախն
է, եւ սա Արշակ Գ. Բ ալլաւ ինչ հարկ կար այդ
նշանակումներն ամէն անգամ ընդունել շախի
ուսին:

Թէև վերիպաժ բուն նպատակից, բայց այս
գործը կարելի է անաւելք համարել կարծում
եմ — Ո՛չ, թէև իր արժէքը այնտեղ չէ, ուր
կարծում է հեղինակը, ձգնելով ապացուցել է
մի վրիպական զրոյթ, հեղինակը հաւաքած է ա-
ռատ նիւթ, ու թէև ի՞նչ յայտուած ապացուցել, որ
Քաշանց տունը Արշակունեանց վէպն է, բայց
կատարած է համեմատական հետազոտութիւն ե-
րեք հայ զրոյցները, որ իր տեսակի մէջ հզակէ
աշխատութիւն է: Սա հայ հէքեաթների առաջին
համեմատական հետազոտութիւնը կարելի ենք
համարել: Եւ որքան պիտի շահէր թէ՛ հեղինակը
եւ թէ՛ մեր զրականութիւնը եթէ Ս. Կանայան
այդ ստանի մէջ ըլլար: Նա կատարած է մի ար-
դիւնատու աշխատանք: Համեմատած է երեք զը-
րոյցները իրար հետ եւ տարբերած է նման եւ ան-
նման միջադէպերը: Գտած ու ձևակերպած է այն
անշուքութիւնը, որ այդ երեք զրոյցն ունին Սա-
ունցի Դաւթի վէպի հետ եւ պարզած է այդ զը-
րոյցների հայկական տարբերը: Զատ որոյած է
այն տարբերը, որ Թափառիկ մտադրել են եւ այս
ստիժով հաւաքած է համեմատական աստղծա-
նադրական հաստատում է այդ զրոյցների հնու-
թիւնը առնուազն մինչև ժ. Գար. Նրա հետեւ-
ըր գտնելով Յ. Թլկուրանցի եւ Ն. Քուշակի բա-
նաստեղծութեանց մէջ, ինչպէս եւ հերոսների ա-
նունների կիրարկութիւնը՝ ձեռագրական հին յի-
շատագրանքների մէջ: Իր ծանօթութիւնները
փոքրիկ մենագրութիւններ են յաճախ, ուր հա-
ւաքուած են հարուստ նիւթեր: Եւ ամէն անգամ
իշխանարով յիշուած են այն աղբիւրները, որ-
տեղից առնուած են այդ նիւթերը: Այսպիսի մե-

նագրութիւն կարելի է համարել երկանունների,
մականունների եւ անունների փոփոխութեան մա-
սին գրածը (327, 678): Սե. սարերի մասին յիշա-
ծը (353): Ծանօթութիւնն Արշակունեաց կալ-
ուածների մասին (353), Սե. ու Սպիտակ գոյների
նշանակութեան եւ այդ ատիժով լուսաւորչի եւ
Սահակ Պարթեւի տեսիլների մասին (416), խիստ
արժէքաւոր է այն տարբերութիւնը տեսնելու եւ
պատմելու մինչև, որ նա բերում է վիպասացի
բերնից (412), հիշող է այն դիտողութիւնը, որ
չտեսնելով լիսնանով յոգնակի կազմում են նաեւ
այնպիսի բառեր, որ յոգ. ի՞նչն վերջանում (413
-9): Ուշագրաւ է իր նպատակը ՏՃԵՆԱյ Սաթնիկի
... հաստատում մեկնութեան (510). կարծում եմ
հիշող է իր ստուգումը Բարիկ Սիւնու մասին, ու-
րին նա համարում է վասակ Սիւնու որդին (443):
Խիստ ուշագրաւ է վահան Մամիկոնեանի եւ
Րուստն Արծրունու խնամիրական կապերի քննու-
թիւնը (514) ինչպէս եւ մեր քրիստոնէայ չըջնի
մերձամուսնութեան, (որ յատուկ հետազոտու-
թեան նիւթ է արած ժամանակին Արարատ ամ-
առգրի մէջ), գէտ ու ժողովրդ պահելու մասին զը-
բածը (545), եւ այլն եւ այլն:

Այնուհետեւ նա տալիս է մի քանի յաջող բը-
նագրական եւ բառաշնչական նշույթներ. այսպէս
Խորենացու աշխարհագրութեան «Բամի լեռանց»,
որ նա ուղղագրում է «Ջամ ի լեռանց»՝ Փարթե-
ցու «Յոլին գեղին», որ համարած են յատուկ ա-
նուն, իսկ ինքը կարգում է «յոլին գեղին» եւ
հասկանում «գիւղի վերնակողմը». Խորենացու
Դադաքէն նա ըստ Փաւստոսի ուղղագրում է Դա-
դաքէ (312). հիշող մեկնութիւն է տալիս «Ջոյ-
րաթիւ» բառին, որ նա համարում է «Թաթի-
քոյը» (461), որովհետ է Երեւնայ զայտի տեղը (423)
եւ շատ ուշագրաւ դիտողութիւն է անում թէ մեր
հին մասնագրութեան մէջ Արշակունեաց իշխա-
նութեան վախճանը համարած են վարդանանց
պատերազմը (315) եւ այլն:

Նկատի ունենալով «Բաշանց տուն» աշխատու-
թեան այս արժէքաւոր կողմերը, նաև Ս. Կանա-
յեանի երկարամեայ գրական-բանասիրական գոր-
ծունէութիւնը, ինչպէս եւ իր բաղամեայ ծառա-
յութիւնն իրրի դաստան Գէորգեան ձեմարանի,
եւ քաջալսերելու համար մեր բանահիւստութեան
հետազոտութիւնը՝ կարծում եմ, որ արդար կը
լինէր եթէ Դուրեան Մրցանակի Յանձնաժողովը
վարձատրել վաստակաւոր բանասէրին:

Խնդրելով որ

Միամ յարգանք եւ պատրաստակամ

Ն. ԱՂԱՅԱՆ

